յորդ կաթիլներ և սիրտս խեղդուեց հառաչանքների անընդհատ աղմուկից . . .

« Աշոտ Ողորմած . . . »

Հասկացա՛յ այժմ, թէ ինչո՞ւ էք դուք աւեր ու կործանուած, ո՜վ հայրենի աւերակներ, և թէ ինչո՞ւ էք հառաչում ու ողբում այսպէս անվե՛րջ ու անընդհա՛տ։

Բարեա՛ւ Մնաք։

ՊԵՏՐՈՍ ՄԱՃԱՌԵԱՆՑ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՊԱՇԱՐՄԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՒ ԹԱԳԱՒՈՐՆ ԴՈՒԿՍՈՆԻ

Իսկ անդին ալ Բոյիլեոն կը դիտէ բարձըր տեղէ
Ամրաշէն զօրեղ քաղքին դիրքն և արուեստն հնարակերտ։
55. — Քաղաքն Երուսաղէմ ձըգուած է զոյգ բըլրոց վրայ,
Բարձրութեամբ անհաւասարք, ճակատ ճակտի դէմ դրուած.
Երկուքին մէջտեղէն կ'երկըննայ ձոր մը բաժնող
Թէ՛ քաղաքն երկու մասի և թէ՛ մէկ բլուրը միւսէն.
Ամուր և անառիկ գըրաւանց երեք կողմանէն,
Զորրորդէն անըզգալի վերելքով ներս կը մըտցուի.
Սակայն այս կողմն աւելի դեռ բարձրաբերձ պարըսպօք
Պաշտպանուած է, և դիրքովն հիւսիսային դին կ'իյնայ։
56. — Քաղաքին մէջ աւազանք կան, ուր կ'երթան կ'ամփոփուին
Անձրեւէն ձեւացած ջուրք. կան նաեւ մօրք և աղբիւրք.
Սակայն դուրսը չորս կողմէն դալարէ զուրկ է գետինն,
Ամուլ և անջըրդի ակունքներէ, վտակներէ.
Եւ ընաւ կանաչազարդ ճոխ ծառաստան մի չըկայ,
Որ փթըթի և ամառուան շոգին հովոց մ'ընծայէ.
Այլ միայն անտառ մը վեց մղոն հեռուէն կ'երկըննայ,
Վնասակար իւր հովանեօք, զարհուրելի մութ տեսքով։
57. — Արեւուն ելած դեհէն՝ ուր այդ անտառը կ'աճի,
Երջանիկն Յորդանանու ազնիւ ալիք կը հոսեն.
Իսկ անոր հակառակ դին՝ ուր արեւ կը մըտնէ,
Միջերկրեայ ծովուն ափունք կը տարածուին աւազուտ։
Հիւսիսի կողմն է Բեթէլ, այն որ սեղան բարձրացուց
Ոսկեղէն երընջին, հոն Սամարիան ալ կ'իյնայ.

digitised by A.R.A.R.@

Անձրեւի տարափ իրեն կը բերէ հողմն հարաւէն,
Եւ հոս է Բեթլէհէմին ծնընդավայր վեհաշուք։

. . . .

64. — Ասոնք այս կերպ խօսէին. իսկ զօրագլուխըն Կոփրէտ
Զօրս կողմը դիտելէ վերջ՝ իւր զօրաց քով կ'իջնէ,
Եւ զի ա՛յնպէս կը խորհի՝ որ զառիվեր կողմանէ
Անօգուտ պիտի ըլլար թէ յարձակումն ընէին,
Հարթ դաշտավայրին վրայ՝ հիւսիսի դրան դիմաց,
Որ վերջնոյս հետ միացած է, վրանները կը պարզէ.
Եւ անկէց դէպ ի յառաջ գնալով՝ մինչեւ աշտարակն,
Որ Անկեան–Բուրգ կը կոչուի, կը զետեղէ զինուորներն։
65. — Բանակին շրջապըլորն այն՝ կը պատէ բովանդակ
Երեք մասը քաղաքին և կամ թէ քիչ մը պակաս,
Զի ամէն կողմերէ զայն պաշարել չէր կարելի,
Ա՛յնքան ընդարձակ կը տարածուէր կ'երկըննար.
Կը ջանայ Կոփրետ փակել գոնէ բոլոր ճամբաներն,
Ուսկից հնար էր օգնութիւն և կամ պաշար գալ դուրսէն.
Ուստի հարկ եղած անցքերն ամբողջ բռնել կը հրամէ,
Որով այս և այն կողմէն կը խափանուին ելեւելք։
66. — Եւ պատուէր կու տայ դարձեալ որ վրաններն ամրացուին
Խորափոր խրամներով և ցըցապատ պատնիշօք,
Որոնք թէ՛ քաղաքէն դո՛ւրս յարձակողաց են արգելք,
Եւ թէ՛ կը զըսպեն ասպատակներն արտաքին։
Այս գործերս աւարտելէ յետոյ ուզեց Կոփրետոս
Քաջազինըն Դուդոնի հանգչած դիակը տեսնել,
Դէպ ի հոն ուղղեց քայլերն՝ ուր սըխրալից լալագին
Հանգուցեալ ասպետին չո՛րս կողմը պատեր էր ամբոխն։
67. — Մըտերիմ բարեկամներն ազնըւաշուք ճոխութեամբ
Զարդարեր էին դագաղն՝ ուր նա վըսեմ կը հանգչէր.
Երբ մըտաւ Կոփրետ՝ իսկոյն հոն գտնըւած բազմութիւնն
Աւելի դեռ ձայներնին բարձրացուցին ողբկոծով.
Բարեպաշտըն Բույիլեոն սակայն սանձեց իւր յուզումն,
Ոչ մըռայլ և ոչ ալ զուարթ՝ կեցաւ անխօս պապանձած.
Եւ յետ քիչ մ'ատեն աչքերն յառած խորին մըտածմամբ
Հանգուցեալը դիտելու՝ հուսկ ուրեմն այսպէս բսաւ.
68. — Ո՜հ, ոչ սուգ և ոչ ալ ողբ կը պատշաճին քեզ երբե՛ք.
Աշխարհիս վըրայ մեռար, սակայն երկնից մէջ ծընար
Եւ հոս ալ՝ ուր մէկդի մահացու զգեստդ թողուս,
Մեծամեծ փառաց անմահ հետքեր դըրոշմած կը ձըգես.
Ապրեցար՝ ինչպէս զինուոր մը քրիստոնեայ՝ սրբութեամբ
Եւ նո՛յնպէս ալ մեռար. արդ վայելէ՛, յագեցուր
Անձկալէտ աչքերդ, ամե՛ն հոգի, զմայլմամբըն Աստուծոյ.
Եւ բարի գործերուդ վարձք ընդունէ պսակ յաղթութեան։
69. — Կեցցե՛ս դուն երջանիկ, վասըն զի այս մեր վիճակն
Եւ ոչ թէ քու արկածդ՝ է արտասուաց արժանի,
Ըստ որում՝ քու մեկնելու քայլիցդ հետ՝ զոյգ մեկնեցաւ

digitised by A.R.A.R.@

Այնքան քաջընտիր և զօրեղ մասն մը մեզմէն։
Բայց թէ մինչև այս, ամէնին տրուած կոչմամբն անուանեմ,
Երկրաւոր օգնութենէդ ըզմեզ հոս զուրկ կը թողու,
Երկնային հիմայ կրնաս խընդրել նըպաստ մեզ համար,
Զի վերին ընտրեալ դասուց մէջ կը խառնեն զքեզ Երկինք։
70. — Եւ ինչ կերպ որ տեսանք թէ մահացու քու զէնքերդ
Մահացու կենացդ մէջ կը վարէիր մեր օգտին,
Ա՛յսպէս ալ յուսանք հիմայ, հոգի՛դ երկնային,
Ի գործ պիտի դընես երկնից զէնքերն անվըրէպ.
Սովորէ արդ ընդգըրկել առ քեզ հանած աղերսնիս,
Եւ հասնիլ մեզ նեղութեանց մէջ վօրավիգն ապաւէն.
Աւետի՛ս յաղթանակի, առ քեզ սըրտովքս եռանդուն՝
Տաճարին մէջ յաղթութեամբ մի կատարենք ուխտերնիս։
71. — Այսպէս խօսեցաւ. և գիշերուան մութ խաւարն
Օրուան լոյս ճառագայթներն արդէն մարեր էր իսպառ,
Եւ ամէն կերպ տաղտկալից հոգ մըտածմունք մոռցնելով՝
Բերած էր հետը զուլ դադար ողբոց ու արտասուաց։
Բայց Կոփրետ համոզուելով՝ որ պատուարաց դէմ կռուիլն
Անհընար բան էր՝ առանց պաշարպաշանդ կազմածոց,
Կը խորհի զերանն ուսկի՛ց ճարել և ինչ ձևերով
Կազմել մեքենաներն. և ապա քուն կը մըտնէ։
72. — Զուգահետ արեգական ելաւ, և ինքն ալ՝ անձամբ
Մասնակցիլ ուզեց թաղման թափօրին վեհ Դուդոնի։
Հոտաւէտ նոճի փայտէ, պատնէշներէն քիչ հեռու,
Բըլրան մ'ըստորոտին վրայ՝ գերեզմանն են կազմեր.
Շիրմին քով բարձրացած է տարածուն ճիւղերով
Հըսկայ արմաւենի մ'իւր հովանին սըփռելու.
Հո՛ն զինքն հանգուցին, և քահանայքն երգասաց
Ա՛յն տեղ իւր հոգւոյն խաղաղութիւն մաղթեցին։
73. — Ոստերու վրայէն աստին անդին կախուած են շքանիշք,
Եւ ասոնց հետ ալ գերի առնուած զէնքեր զանազան,
Զորս երբեմըն բախտագոյն կռուոց մէջ ձեռք էր բերած
Ասորւոց և Պարսկաստան երկրին ընտիր ազգերէ.
Իսկ ծառին բունն՝ իւր զրահով և սեփական զէնքերով
Ճամկեցին շըրջաբոլոր, և յետոյ վրան գըրուեցաւ.
« Այս դամբանիս մէջ կը հանգչի քաջամարտիկըն Դուդոն,
Պատուեցէք սուրբ հաւատոց այս վեհագոյն ախոյեանն »։
74. — Այլ սակայն գըթասիրտ բապարապետըն Բուլիոն
Յետ տըխուր և բարեկրօն պաշտամունքն մեկնելու,
Բանակին բոլոր հիւսերը դէպ անտառ կ'ուղարկէ,
Հետերնին ալ բազմաթիւ պահպան զինուոր դընելով.
Անտառ ծածկըւած է ձորերու մէջ անտես,
Եւ ընիկ մի՛ Ասորւոց երկրին յայտնած էր փռանկաց.
Այնպիսի մեքենաներ այնտեղ կ'երթան շինելու՝
Որ անոնց դէմ անպաշտպան մընան պատուարք քաղաքին։
75. — Զիրար կը խրախուսեն ծառերն երկիր տապալել,

digitised by A.R.A.R.@

Ամսվոր թրչնամուխնամբ մ՚ամառուն հետ վարուելով.
Սայրասուր երկաթներէ կըտրուած՝ գետին կը փրռուին
Սըրբատուէր արմատներք և վայրենի հացիներ,
Տրխրագէմ շոնք և նոճիք, նըշդարներք և սարոյք,
Բեռեկներք սաղարթապեպ, եղեւնափայտք և սօսիք.
Եւ կընձներք՝ որոց հետ տեղ տեղ որթատունկք գըրկախառն,
Ցամաձուռ ոստերներով կըրոմնած՝ երկինք բարձրանան։
76. — Ոմանք ալ թեգոշներն և այլք կաղներք կը սղոցեն,
Որոնք բիւր անգամ փոխեր են նորատոր տերեւներ,
Բիւրաւոր անդամներ ալ հողմոց գոռ բարկութիւնն՝
Ամսատան գիմադրութեամբ՝ են նրւաեր ու սանձեր.
Ուրիշներ ալ կը բեռցնեն ճըմնչող սայլից շալակին՝
Հոսաւէտ կոճդի հակեր սրնիներու և մայրեաց.
Զկնքերու շառաչմանէն և խառնիխուռն շունչէ
Կը թոգուն սրջերին գազանք, թըռչունք բոյներին։

ՏԱՍՍՈՅ. Ազատումն Երուսաղեմի. (Երգ Գ.).
Թարգմ. Հ. Ա. Տէրոյեան.

ՄՈՎՍԷՍ Ի ԼԱՌԱՆԻ

(Ջօնեալ առ Վեր. Հ. Դաւիթ Նազարեթ)

Արեգակն ըզճառագայթս իւր երկայնեալ ձգէր առ շեղ
Բացանշան պայծառ ծագեալ ըզկատարսըն վրանաց պաշին,
Մեծամեծս յօգս ըզկրնի ոսկէճաճանչ հեաբս թաղեալ
Ի թաղելն իւրում ծածկել ի յաւազուսս անապատաց.
Գոյն ոսկի ընդ ծիրանւոյ ըզպաշտամայրն համակէին։
Ի լեռան անբոյս ի Նարաւ եկեալ Մովսէս այրն Աստուծոյ,
Եւ զտեղի առեալ անդէն, հեզ անհըսկարար ակնարկութեամբ,
Շուրջ ածէր պարապով ի հեռաւոր զաչաց տեսիլ։
Ցեռանէ նախ ըզթասպա, զորով պսակին շուրջ թըզենիք,
Անկր ապա քան ըզլերինս յառեալ պիտէ նա զմանառէ
Եւ զամենայն իսկ երկիրն Գաղատաց և զԵգիպտի,
Որք կային ընդ աջմէ իւրմէ մէն մի պարարտ երկիրք։
Նրշմարէ և ընդ հարաւ զանբեր ըզմեծ երկիրն Ցուզայ,
Եւ ըզծագս իւր ուազինս՝ ուր նիրհէ ծոմն արեւմտեայ։
Բացագոյն սլմոսի հովիտ այլագունեալ յերեկոյայ,
Ուր Նեփթալիմն երեւի, ձիթատանեօք պըսակաւոր։
Ի գաշտավայրս յորս շրջեալ հեշտ խաղալիկ փրփրեցին ծաղիկք՝
Ցակն անկանի էրիքսվ, որ է երկիր արմատեռեաց.
Եւ հերձիք փարատորք ի Փոգովրայն գաշտաց անտի
Մինչեւ անգր ի Սիգոմ անտառացեալ ասղեալ ձրգին։

digitised by A.R.A.R.@